

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ
ՀԱՄԱՐ ԱՐԳԵԼՎԱԾ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ՑԱՆԿԵՐԸ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ
ՀԱՅՏԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՂԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 327-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գլխավոր տեղեկություն

Համար	N 90-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (03.05.2024-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2015.02.18/8(1097).1 Հոդ.111.6
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	05.02.2015
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	11.02.2015
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	19.02.2015

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 փետրվարի 2015 թվականի N 90-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՍԱՐ ԱՐԳԵԼՎԱԾ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՀԱՅՏԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 327-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 26-րդ պարբերության, «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 29-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

(Նախաբանը խմբ. 06.05.21 N 718-Ն)

1. Հաստատել՝

1) օգոնային շերտը քայքայող նյութերի և դրանք պարունակող արտադրանքի ցանկը, որոնց ներմուծումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք և արտահանումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արգելված է՝ համաձայն N 1 հավելվածի.

2) վտանգավոր թափոնների ցանկը, որոնց ներմուծումը Եվրասիական տնտեսական միության տարածք կամ որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության անդամ այլ երկրներից Հայաստանի Հանրապետություն արգելվում է՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ջրային կենսաբանական պաշարների որսի միջոցների ցանկը, որոնց ներմուծումն արգելված է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք՝ համաձայն N 3 հավելվածի.

4) գրենլանդական փոկերից և դրանց ձագերից պատրաստված արտադրանքի ցանկը, որոնց ներմուծումն արգելված է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք՝ համաձայն N 4 հավելվածի.

4.1) կենդանի սամույրների ցանկը, որոնց արտահանումն արգելված է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից՝ համաձայն N 4.1 հավելվածի.

5) օգոնային շերտը քայքայող նյութերի ցանկը, որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով սահմանափակ է արտահանման և ներմուծման դեպքում՝ համաձայն N 5 հավելվածի.

6) վտանգավոր թափոնների ցանկը, որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով սահմանափակ է արտահանման և (կամ) ներմուծման դեպքում՝ համաձայն N 6 հավելվածի.

7) վայրի կենդանիների և առանձին վայրի բույսերի և վայրի բույսերից դեղաբուսական հումքի ցանկը, որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով սահմանափակ է արտահանման դեպքում՝ համաձայն N 7 հավելվածի.

8) թմրամիջոցների և հոգեմետ նյութերի պրեկուրսորներ չհամարվող թունավոր նյութերի ցանկը, որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով սահմանափակ է ներմուծման դեպքում՝ համաձայն N 8 հավելվածի.

9) սույն որոշմամբ հաստատված ապրանքատեսակների լիցենզիայի և լիցենզիա ստանալու համար ներկայացվող հայտի ձևերը՝ համաձայն N 9 հավելվածի:

(1-ին կետը լրաց. 04.06.20 N 892-Ն, լրաց., փոփ. 07.04.22 N 473-Ն)

2. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության տարածք վտանգավոր թափոնների ներմուծումը և Հայաստանի Հանրապետության տարածքից դրանց արտահանումը ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակներով արգելվում է.

2) Հայաստանի Հանրապետության տարածք վտանգավոր թափոնների ներմուծումը թաղման կամ վնասագերծման նպատակով արգելվում է.

3) սույն որոշմամբ սահմանված ապրանքատեսակների ներմուծման և արտահանման լիցենզիաները տրամադրվում կամ լիցենզիաների տրամադրումը մերժվում է հայտը գրանցելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

3.1) սույն որոշմամբ սահմանված ապրանքատեսակների ներմուծման և արտահանման լիցենզիաների տրամադրումը փորձաքննության արդյունքների և (կամ) լրացուցիչ փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման պահանջի հետ կապված լիսելու դեպքում ապրանքատեսակների ներմուծման և արտահանման լիցենզիաները լիազոր մարմնի կողմից տրամադրվում են կամ դրանց տրամադրումը մերժվում է փորձաքննության արդյունքների կամ համապատասխան փաստաթղթերի և (կամ) տեղեկությունների ստացման պահից առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N

1524-Ն որոշման N 1 հավելվածի 1.2-րդ և N 2 հավելվածի 2.6-րդ և 2.8-րդ կետերով սահմանված ապրանքատեսակների արտահանման, N 2 հավելվածի 2.1-ին և 2.3-րդ կետերով սահմանված ապրանքատեսակների արտահանման կամ ներմուծման, N 2 հավելվածի 2.13-րդ կետով սահմանված ապրանքատեսակների ներմուծման համար տրվում է մեկանգամյա լիցենզիա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 4 հավելվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն որոշման 2-րդ կետի 7-9-րդ ենթակետերով նախատեսված առանձնահատկությունները.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 2 հավելվածի 2.7-րդ կետով սահմանված ապրանքատեսակների արտահանման և ներմուծման առանձնահատկությունները կարգավորվում են «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշմամբ հաստատված կարգով.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 2 հավելվածի 2.8-րդ կետով սահմանված ապրանքատեսակների լիցենզավորման ընթացքում հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշումներով, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի N 134 որոշմամբ հաստատված հավելվածի 2.8-րդ կետով հաստատված հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիների ու բույսերի տեսակները.

7) սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված ապրանքատեսակների ներմուծման և արտահանման լիցենզիաների ձևակերպման համար հայտատուն, բացի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 4 հավելվածի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերից և տեղեկություններից, լրացուցիչ լիազոր մարմին է ներկայացնում համապատասխան պայմանագրի պատճենն այն դեպքում, երբ հայտատուն հանդես է գալիս որպես առևտրային միջնորդ.

8) սույն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով սահմանված ապրանքատեսակների ներմուծման և արտահանման, ինչպես նաև սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված ապրանքների արտահանման լիցենզիաների ձևակերպման համար, բացի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 4 հավելվածի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերից և տեղեկություններից, հայտատուն լրացուցիչ լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա. պետական իրավասու մարմնի համաձայնությունը (գրավոր տեսքով), որի տարածք ներմուծվում են վտանգավոր թափոնները և (կամ) որի տարածքով տեղափոխվում են վտանգավոր թափոնները՝ Բազելի կոնվենցիային համապատասխան (վտանգավոր թափոնների արտահանման դեպքում),

բ. ապրանք արտահանողի և արտադրողի կամ ներմուծողի և սպառողի միջև պայմանագրի պատճենը, այն դեպքում, երբ հայտատուն հանդես է գալիս որպես միջնորդ,

գ. վտանգավոր թափոնների փոխադրման պայմանագրի պատճենը և արտահանողի (ներմուծողի) ու թափոնների հեռացման համար պատասխանատու անձի միջև պայմանագրի պատճենը, որում խոսվում է այդ թափոնների Էկոլոգիապես անվտանգ օգտագործման մասին,

դ. Բազելի կոնվենցիայի պահանջներին համապատասխան վտանգավոր թափոնների անդրահամանային փոխադրման մասին ծանուցում (3 օրինակից),

ե. Բազելի կոնվենցիայի պահանջներին համապատասխան թափոնների փոխադրման մասին փաստաթուղթ,

զ. վտանգավոր թափոնների օգտագործման համար տեխնիկական (տեխնոլոգիական) հնարավորությունների առկայության մասին տեղեկատվություն (քաղվածք վտանգավոր թափոնները որպես հումք օգտագործելու հնարավորությունը հաստատող տեխնոլոգիական կանոնակարգից կամ այլ փաստաթուղթ, որը հաստատում է դրանց օգտագործման հնարավորությունն առանց այլ վտանգավոր թափոնների կամ դրանց մնացորդների առաջացման), վտանգավոր թափոնների ներմուծման դեպքում,

է. վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիայի, փոխադրման և այլ ներդիրների համարները և ամսաթվերը.

8.1) սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով և 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված բուսական և կենդանական տեսակների արտահանման լիցենզիաների ձևակերպման համար հայտատուն, բացի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 4 հավելվածի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերից և տեղեկություններից, լրացուցիչ լիազոր մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա. վայրի բույսի կամ կենդանու ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ (հավաք, մթերում, գնում, որս և այլն),

բ. արտաքին առևտրային գործարք իրականացնելու դեպքում արտահանողի և ներմուծողի միջև պայմանագրի, համաձայնագրի պատճենը, դրանց բացակայության դեպքում կողմերի միջև համագործակցության մտադրության վերաբերյալ որևէ այլ փաստաթղթի պատճենը, իսկ մնացած բոլոր դեպքերում ներմուծող երկրի համաձայնությունը կամ թույլտվությունը (պատճենը), եթե այդ երկրի օրենսդրությամբ սահմանված է համապատասխան կարգ.

8.2) եթե սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով և 2-րդ կետի 6-րդ ենթակետով

սահմանված բուսական և կենդանական տեսակները միևնույն ժամանակ ընդգրկված են նաև «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի հավելվածներում, ապա դրանց արտահանման առանձնահատկությունները կարգավորվում են «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշմամբ հաստատված կարգով:

8.3) գիտական կազմակերպությունների, կենդանաբանական և բուսաբանական այգիների կողմից գիտահետազոտական, փոխանակման, գենոֆոնդի համալրման, սվիրատվության նպատակով, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով՝ սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով սահմանված ապրանքատեսակների արտահանման առանձնահատկությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի N 1173-Ն և N 1174-Ն որոշումներով սահմանված կարգով:

9) սույն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետով սահմանված ապրանքատեսակների ներմուծման և արտահանման լիցենզիաների ձևակերպման համար, բացի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 4 հավելվածի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերից և տեղեկություններից, հայտատուն լրացուցիչ լիազոր մարմին է ներկայացնում թունավոր նյութի և տեխնոլոգիական պրոցեսի նկարագիրը, որտեղ օգտագործվում է ներմուծվող թունավոր նյութը:

10) սույն որոշման շրջանակներում չկարգավորվող թափոնների անդրսահմանային փոխադրումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Վտանգավոր թափոնների երկրից երկիր տեղափոխման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

(2-րդ կետը լրաց., փոփ., խմբ. 11.02.16 N 137-Ն, խմբ. 27.09.18 N 1056-Ն, 07.04.22 N 473-Ն, փոփ., լրաց. 02.05.24 N 625-Ն)

3. Ուժը կորցրած ճանաչելի Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի «Օզոնային շերտը քայքայող նյութերի ցանկը հաստատելու և ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու մասին» N 327-Ն որոշման 1-ին կետը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Հ. Աբրահամյան

2015 թ. փետրվարի 11
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
փետրվարի 5-ի N 90-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՕՉՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ԶԱՅԶԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐԳԵԼՎԱԾ Է (վերնագիրը խմբ. 11.02.16 N 137-Ն)

Անվանացանկ A

Արտադրանքի անվանումը			Ծածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
Քիմիական բանաձևը	Նյութը	Քիմիական անվանումը	
Խումբ I			
CFCl ₃	(ՔՖԱ -11)	ֆտորտրիքլորմեթան	2903 77 600 0-ից
CF ₂ Cl ₂	(ՔՖԱ -12)	դիֆտորդիքլորմեթան	2903 77 600 0-ից
C ₂ F ₃ Cl ₃	(ՔՖԱ - 113)	1,1,2-տրիֆտորտրիքլորեթան	2903 77 600 0-ից
C ₂ F ₄ Cl ₂	(ՔՖԱ - 114)	1,1,2,2-տետրաֆտորդիքլորեթան	2903 77 600 0-ից
C ₂ F ₅ Cl	(ՔՖԱ - 115)	պենտաֆտորքլորեթան	2903 77 600 0-ից
Խումբ II			
CF ₂ BrCl	(Հալոն 1211)	դիֆտորքլորբրոմմեթան	2903 76 100 0

CF ₃ Br	(Հալոն 1301)	տրիֆտորբրոմեթան	2903 76 200 0
C ₂ F ₄ Br ₂	(Հալոն 2402)	1,1,2,2-տետրաֆտորդիբրոմեթան	2903 76 900 0-ից

Անվանացանկ B

Արտադրանքի անվանումը			Ծածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
Քիմիական բանաձևը	Նյութը	Քիմիական անվանումը	
Խումբ I			
CF ₃ Cl	(ՔՖԱ - 13)	տրիֆտորքլորմեթան	2903 77 900 0-ից
C ₂ FCl ₅	(ՔՖԱ - 111)	ֆտորպենտաքլորեթան	2903 77 900 0-ից
C ₂ F ₂ Cl ₄	(ՔՖԱ - 112)	դիֆտորտետրաքլորեթաններ	2903 77 900 0-ից
C ₃ FCl ₇	(ՔՖԱ - 211)	ֆտորհեպտաքլորպրոպաններ	2903 77 900 0-ից
C ₃ F ₂ Cl ₆	(ՔՖԱ - 212)	դիֆտորհեքսաքլորպրոպաններ	2903 77 900 0-ից
C ₃ F ₃ Cl ₅	(ՔՖԱ - 213)	տրիֆտորպենտաքլորպրոպաններ	2903 77 900 0-ից
C ₃ F ₄ Cl ₄	(ՔՖԱ - 214)	տետրաֆտորտետրաքլորպրոպաններ	2903 77 900 0-ից
C ₃ F ₅ Cl ₃	(ՔՖԱ - 215)	պենտաֆտորտրիքլորպրոպաններ	2903 77 900 0-ից
C ₃ F ₆ Cl ₂	(ՔՖԱ - 216)	հեքսաֆտորդիքլորպրոպաններ	2903 77 900 0-ից
C ₃ F ₇ Cl	(ՔՖԱ - 217)	հեպտաֆտորքլորպրոպաններ	2903 77 900 0-ից
Խումբ II			
CCl ₄		քառաքլորածխածին (ՔՔԱ) կամ տետրաքլորմեթան	2903 14 000 0
Խումբ III			
C ₂ H ₃ Cl ₃		մեթիլքլորոֆորմ (ՄՔՖ), այսինքն 1,1,1 - տրիքլորեթան	2903 19 000 0-ից

Անվանացանկ C

Արտադրանքի անվանումը			Ծածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
Քիմիական բանաձևը	Նյութը	Քիմիական անվանումը	
Խումբ II			
CHFBr ₂	(ՀԲՖԱ - 21B2)	ֆտորդիբրոմեթան	2903 79 300 0-ից
CHF ₂ Br	(ՀԲՖԱ - 22B1)	դիֆտորբրոմեթան	2903 79 300 0-ից
CH ₂ FBr	(ՀԲՖԱ - 31B1)	ֆտորբրոմեթան	2903 79 300 0-ից
C ₂ HFBBr ₄	(ՀԲՖԱ - 21B4)	ֆտորտետրաբրոմեթան	2903 79 300 0-ից
C ₂ HF ₂ Br ₃	(ՀԲՖԱ - 23B3)	դիֆտորտրիբրոմեթան	2903 79 300 0-ից
C ₂ HF ₃ Br ₂	(ՀԲՖԱ - 23B2)	տրիֆտորդիբրոմեթան	2903 79 300 0-ից
C ₂ HF ₄ Br	(ՀԲՖԱ - 24B1)	տետրաֆտորբրոմեթան	2903 79 300 0-ից
C ₂ H ₂ FBr ₃	(ՀԲՖԱ - 31B3)	ֆտորտրիբրոմեթան	2903 79 300 0-ից
C ₂ H ₂ F ₂ Br ₂	(ՀԲՖԱ - 32B2)	դիֆտորդիբրոմեթան	2903 79 300 0-ից
C ₂ H ₂ F ₃ Br	(ՀԲՖԱ - 33B1)	տրիֆտորբրոմեթան	2903 79 300 0-ից
C ₂ H ₃ FBr ₂	(ՀԲՖԱ -)	ֆտորդիբրոմեթան	2903 79 300 0-ից

	41B2)		
$C_2H_3F_2Br$	(ՀԲՖԱ - 42B1)	դիֆտորբրոմէթան	2903 79 300 0-ից
C_2H_4FBr	(ՀԲՖԱ - 51B1)	ֆտորբրոմէթան	2903 79 300 0-ից
C_3HFBr_6	(ՀԲՖԱ - 21B6)	ֆտորհեքսաբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3HF_2Br_5$	(ՀԲՖԱ - 22B5)	դիֆտորպենտաբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3HF_3Br_4$	(ՀԲՖԱ - 23B4)	տրիֆտորտետրաբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3HF_4Br_3$	(ՀԲՖԱ - 24B3)	տետրաֆտորտրիբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3HF_5Br_2$	(ՀԲՖԱ - 25B2)	պենտաֆտորդիբրոմպրոպան	2903 79 300 0-ից
C_3HF_6Br	(ՀԲՖԱ - 26B1)	հեքսաֆտորբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_2FBr_5$	(ՀԲՖԱ - 31B5)	ֆտորպենտաբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_2F_2Br_4$	(ՀԲՖԱ - 32B4)	դիֆտորտետրաբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_2F_3Br_3$	(ՀԲՖԱ - 33B3)	տրիֆտորտրիբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_2F_4Br_2$	(ՀԲՖԱ - 34B2)	տետրաֆտորդիբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_2F_5Br$	(ՀԲՖԱ - 35B1)	պենտաֆտորբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_3FBr_4$	(ՀԲՖԱ - 41B4)	ֆտորտետրաբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_3F_2Br_3$	(ՀԲՖԱ - 42B3)	դիֆտորտրիբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_3F_3Br_2$	(ՀԲՖԱ - 43B2)	տրիֆտորդիբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_3F_4Br$	(ՀԲՖԱ - 44B1)	տետրաֆտորբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_4FBr_3$	(ՀԲՖԱ - 51B3)	ֆտորտրիբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_4F_2Br_2$	(ՀԲՖԱ - 52B2)	դիֆտորդիբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_4F_3Br$	(ՀԲՖԱ - 53B1)	տրիֆտորբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_5FBr_2$	(ՀԲՖԱ - 61B2)	ֆտորդիբրոմպրոպան	2903 79 300 0-ից
$C_3H_5F_2Br$	(ՀԲՖԱ - 62B1)	դիֆտորբրոմպրոպան	2903 79 300 0-ից
C_3H_6FBr	(ՀԲՖԱ - 71B1)	ֆտորբրոմպրոպան	2903 79 300 0-ից
Խումբ III			
CH_2BrCl		բրոմքլորմեթան	2903 79 300 0-ից

Անվանացանկ D

	Արտադրանքի անվանումը	Ճածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
1.	Սառնագենտ խառնուրդներ	3827-ից (բացի 3827 12 000 0)
2.	Օդորակիչներ և ջերմային պոմպեր	8415 10 8415 81 00 8415 82 000 0 8418 61 00 8418 69 000-ից

3.	Սառնարաններ	8418 10 200-ից 8418 10 800-ից 8418 10 900 0-ից 8418 50-ից 8418 69 000-ից
4.	Սառույց արտադրող սարքավորումներ, կաթի սառեցման համակարգեր	8418-ից 8419-ից
5.	Սառցախցիկներ	8418 10 200-ից 8418 10 800-ից 8418 10 900 0-ից 8418 30 200 8418 30 800 8418 40 200 8418 40 800 8418 50-ից 8418 69 000-ից
6.	Օդի չորացուցիչներ	8418 69 000-ից 8479 89 970 1-ից 8479 89 970 7-ից
7.	Փրփրացված ջերմամեկուսիչ սալիկներ, վահանակներ, խողովակների ծածկույթներ, որոնց արտադրության ժամանակ օգտագործվել են օզոնային շերտը քայքայող նյութեր պարունակող փրփրեցնող և ծակոտիներ ձևավորող նյութեր	3921 11 000 0-ից 3921 12 000 0-ից 3921 13 100 0-ից 3921 13 900 0-ից 3921 14 000 0-ից 3921 19 000 0-ից
8.	Պոլիէթերային (պոլիուլային) կոմպոնենտներ, միացություններ փրփրացված պոլիուրեթանի արտադրության համար (կոմպոնենտ A)	3907 29 900-ից
9.	Շարժական կրակմարիչներ	8424 10 000 0-ից

Անվանացանկ E

Արտադրանքի անվանումը		Ճածկագիրն ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
Քիմիական բանաձևը	Անվանումը	
Խումբ I		
CH ₃ Br	մեթիլբրոմիդ	2903 61 000 0

1. Սույն ցանկում նշված օզոնային շերտը քայքայող նյութերի և դրանք պարունակող արտադրանքի ներմուծումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք և (կամ) դրանց արտահանումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արգելվում է՝ բացառությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 21-ի N 30 որոշման N 20 հավելվածով սահմանված դեպքերի:

2. Անվանացանկ B-ի III խմբի C₂H₃Cl₃ բանաձևը չի վերաբերում 1,1,2- տրիքլորէթանին:

3. Անվանացանկ D-ում ներառված արտադրանքի ներմուծումը և (կամ) արտահանումն արգելված է՝ բացառությամբ Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող այն երկրի արտահանման վերահսկողության համակարգով կարգավորման ենթակա արտադրանքի, որն այդ ապրանքը ուղարկող (ստացող) երկիրն է:

4. Սույն ցանկի օգտագործման նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ինչպես ԵԱՏՄ ԱՏԳ

ԱԱ-ի ծածկագրերով՝ հաստատված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2015 թվականի ապրիլի 21-ի N 30 որոշման N 1 հավելվածով, այնպես էլ արտադրանքի (սյուբի) (առևտրային և քիմիական հատկանիշներով) անվանմամբ:

(հավելվածը խմբ. 11.02.16 N 137-Ն, 06.05.21 N 718-Ն, խմբ., լրաց., փոփ. 07.04.22 N 473-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
փետրվարի 5-ի N 90-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ ԿԱՍ ՈՐՈՆՑ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՅԼ
ԵՐԿՐՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է**

Ապրանքի անվանումը	Ծածկագիրը՝ ըստ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ	Թափոնի տեսակի ծածկագիրը՝ ըստ «Վտանգավոր թափոնների երկրից երկիր տեղափոխման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայի դասակարգման	
		A և B թափոնների միացյալ ցանկը	Y կարգավորող թափոնների հիմնական ցանկը
1. Թափոններ, որոնց կազմում որպես բաղադրիչ մաս կամ որպես աղտոտիչ մտնում են հետևյալ սյուբերից ցանկացածը	2805 40-ից 7204-ից 7404 00-ից	A1030	
մկնդեղ, մկնդեղի միացություններ	7503 00-ից		Y24
սնդիկ, սնդիկի միացություններ (բացառությամբ սնդիկային լամպերի, լյումինեսցենտային փողերի)	7602 00-ից 7802 00 000 0-ից		Y29
	7902 00 000 0-ից 8002 00 000 0-ից 8101 97 000 0-ից 8102 97 000 0-ից 8103 30 000 0-ից 8104 20 000 0-ից 8105 30 000 0-ից 8106 90 000 0-ից 8108 30 000 0-ից 8109 31 000 0-ից 8109 39 000 0-ից 8110 20 000 0-ից 8111 00 190 0-ից 8112 13 000 0-ից 8112 22 000 0-ից 8112 31 000 0-ից 8112 41 000 1-ից		
	8112 52 000 0-ից 8112 61 000 0-ից 8112 92 210 1-ից 8112 92 210 8-ից 8113 00 400 0-ից		
2. Մազնեօհումի տոշի	8104 20 000 0-ից		

	8104 30 000 0-ից 8104 90 000 0-ից		
3. Ապակու և մետալուրգիական արտադրության փոշի, որը պարունակում է բերիլիում և դրա միացությունները	2620 91 000 0-ից		Y20
4. Կապար և դրա միացությունները պարունակող փոշի	2620 29 000 0-ից		Y31
5. Վանադիումի միացություններ պարունակող փոշի	2620 99 950 9-ից		
6. Գալվանական ստվածքներ	2620-ից 2837-ից	A1050	Y17, Y7, Y21, Y22, Y23, Y26, Y33
7. Խարամ, մոխիր և մնացորդներ (բացի սև մետաղների արտադրության թափոններից), որոնք պարունակում են մետաղներ, արսեն կամ դրանց միացությունները, այդ թվում՝	2620-ից		
1) մետաղական մնացորդներ և մնացորդներ, որոնք բաղկացած են թվարկված նյութերից ցանկացածի համահավաքներից՝		A1010	Y20, Y24, Y29, Y31
արսեն, բերիլիում, կապար, սնդիկ			
մանգանի շլամներ՝ մանգանի երկօքսիդի էլեկտրոլիտիկ արտադրությունից			
պղնձի արտադրության արսենային սորախցուկ		A1030	Y24
անագի արտադրության արսենակալիումային սորախցուկ		A1030	Y24
կապարի արտադրության արսենակալիումային սորախցուկ		A1030	Y24
սելենասնդիկային շլամ՝ ծծմբական թթվի արտադրությունից			Y25, Y29
կապարի, նիկելի, կադմիումի հիդրօքսիդների շլամ			Y31, Y26
քլորային այրումիների թափոններ՝ ացետոֆենոնի խառնուկով շլամ (մոխրաջուր), փոշի և ստվածքներ՝ ցինկի մշակումից հետո		A1070	
մոխիր՝ մեկուսացված պղնձալարի այրումից		A1090	
մետաղների խածատման բանեցված լուծույթներ, հիդրավլիկ հեղուկներ, արգելակման հեղուկներ և հակասառիչներ	3825 50 000 0-ից	A1060	Y17
ցինկային մնացորդներ, որոնք պարունակում են կապար և կադմիում	7902 00 000 0-ից	A1080	Y26 Y31
պղնձի մաքրման և անջատման էլեկտրոլիտիկ պրոցեսներից առաջացած էլեկտրոլիտի բանեցված	3825 69 000 0-ից	A1110	Y34 Y35

լուծույթներ			
պղինձ պարունակող խածատման բանեցված լուծույթներ	3825 50 000 0-ից	A1130	Y22
չմասնատված տեսքով բանեցված կապարաթթվային էլեկտրակուտակիչներ	8549 11 000 0-ից	A1160	Y31
կատողաճառագայթային խողովակների ապակու թափոններ և ակտիվ ծածկ ունեցող ապակու թափոնների այլ տեսակներ	7001 00 100 0-ից 8549 31 000 1-ից 8549 91 000 1-ից	A2010	
մանրաթելի և փոշու տեսքով ասբեստի թափոններ	2524-ից 6812-ից	A2050	Y36
ասբեստ պարունակող բանեցված իրեր ասբոցեմենտից, թաղանթանյութի կամ համանման նյութի թելքերով ցեմենտից	6811 40 000-ից		
ապակե թելքերի թափոններ, որոնք իրենց ֆիզիկաքիմիական բնութագրով համապատասխանում են ասբեստին	7019-ից		
օգտագործված սնդիկային լամպեր և լյումինեսցենտային փողեր	8539-ից 8540-ից		Y29
ավելի քան 50%-ով բանեցված սորբենտներ՝ արսինի կամ ֆոսֆինի խառնուրդով	3802-ից 2818-ից 3824-ից 2842-ից		Y24
թափոնների այրման սարքավորումներից առաջացած խարամ և մոխիր (ներառյալ թռչող մոխիր և փոշի)	2621-ից		Y18
պիրոլիզի սարքավորումների խարամ և մոխիր	2621-ից		Y11
2) նավթային կոքսի և բիթումի արտադրության կամ վերամշակման թափոններ (բացառությամբ պիրոլիզային խեժի), այդ թվում՝	2713 90-ից 3825-ից	A3010, A3030, A3190	Y11, Y39
թթվային խեժ, թթվային խայծղան			Y11
յուղերի մաքրումից առաջացած թթվային գուղորոն, որը պարունակում է ծծմբական թթու, խեժացած սուլֆացված միացություններ			Y11
սուլֆոնատային հավելանյութերի արտադրությունից առաջացած թթվային գուղորոն, որը պարունակում է ծծմբական թթու, ծանր օրգանական սուլֆոնատներ			Y11
արոմատիկ ածխաջրածիւնների մաքրումից առաջացած թթվային գուղորոն, որը պարունակում է ծծմբական թթու, արոմատիկ միացություններ, սուլֆաթթուներ			Y11
պարաֆինների մաքրումից			Y11

առաջացած թթվային գուդրոն, որը պարունակում է ծծմբական թթու, օրգանական միացություններ			
կոքսաքիմիական արտադրության բենզոլի բազմաթորման արտադրամասի սուլֆատային բաժանմունքի թթվային խեժ			Y11
թթվային խեժերի վերամշակումից առաջացած մնացորդներ			Y11
կոքսային և գազային գործարանների շլամներ			Y39
3) բանեցված նավթամթերք, այդ թվում՝			
Էթիլացված բենզինի շլամներ և Էթիլացված հականձայթյունային խառնուրդի շլամներ	2620 21 000 0-ից 2710-ից 3811 11-ից	A3030	Y31
Կապարային հականձայթյունային հավելանյութեր պարունակող թափոններ	2710-ից 3811 11-ից	A3030	
8. Մորթու կամ կաշվի հումքի թափոններ, որոնք պարունակում են մարդու և կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչներ	0511 99 100 0-ից 4101-4103-ից 4301-ից 4115 20 000 0-ից	A3110	Y21 Y4
9. Թափոններ, որոնք պարունակում են օրգանական ֆոսֆորային միացություններ	3101 00 000 0-ից 3825 61 000 0-ից	A3130	Y37
10. Ֆտորօրգանական միացությունների թափոններ	2903-ից 3825 61 000 0-ից		Y45
11. Քլորօրգանական թթվի արտադրության թափոններ	2915-ից 2916-ից 2917-ից 2918-ից		Y45
12. Չհալոգենացված օրգանական լուծիչների և դրանց խառնուրդների թափոններ	3825 61 000 0-ից 3825-ից	A3140	Y42
13. Հալոգենացված օրգանական լուծիչների և դրանց խառնուրդների թափոններ	3825 41 000 0-ից	A3150	Y41
14. Պոլիքլորացված դիֆենիլներ (ՊԶԴ), պոլիքլորացված տերֆենիլներ (ՊԶՏ), պոլիքլորացված նաֆթալիններ (ՊՆ) կամ պոլիբրոմացված դիֆենիլներ (ՊԲԴ)՝ ներառյալ ցանկացած այլ պոլիբրոմացված 50 մգ/կգ և ավելի կոնցենտրացիա ունեցող համանման միացություններ պարունակող կամ դրանցով աղտոտված իրերի և նյութերի թափոններ	3825-ից	A3180	Y10
15. Թափոններ՝ խեժանման նստվածքի տեսքով (բացի ասֆալտային կապակցանյութերից), որը գոյանում է օրգանական նյութերի մաքրագտման,	3825-ից	A3190	Y11

թորման կամ ցանկացած պիրոլիտիկ մշակման պարունակում			
16. Ռեզերվային նստվածքներ (թերթաքարերի վերամշակման թափոններ)՝ ֆենոլ պարունակող	2706 00 000 0-ից		
17. Ռետինե թափոններ հետևյալ նյութերից, եթե դրանք խառնված չեն այլ թափոնների, այդ թվում՝		B3040	
1) մաշված օդախցիկներ	4013-ից	B3140	
2) պինդ ռետինի թափոններ (օրինակ՝ էրնիտ)	4017 00 000 9-ից	B3040	
18. (կեսն ուժը կորցրել է 04.02.21 N 115-Ն)			
19. Թափոններ, որոնք պարունակում են կամ աղտոտված են ստորև նշված նյութերով		A4110	
1) պոլիքլորացված դիբենզոֆուրանի ցանկացած անալոգ	3825-ից		Y43
2) պոլիքլորացված դիբենզոդիօքսիլի ցանկացած անալոգ	3825-ից		Y44
20. Պոլիքլորացված կամ պոլիբրոմացված դիֆենիլներ պարունակող նյութերով աղտոտված փաթեթավորման տարաների և կոնտեյներների թափոններ		A4130	
1) պլաստմասսաներից	3915-ից 3923-ից		
2) փայտից	4401 39 000 0-ից 4401 41 000 0-ից, 4401 49 000 0-ից 4415-ից		
3) թղթից և ստվարաթղթից	4707-ից 4819-ից		
4) ապակուց՝ բացառությամբ ապակյա ջարդոնի	7010-ից		
5) սև մետաղներից	7204-ից		
21. Քիմիական տեքստիլ նյութերից հատակի ծածկույթների թափոններ	5701 90-ից 5702 32-ից 5702 42-ից 5702 50 310 0-ից 5702 50 390 0-ից 5702 92 100 0-ից 5702 92 900 0-ից 5703 21 000-ից 5703 29 000-ից 5703 31 000-ից 5703 39 000-ից 5705 00 300 0-ից		
22. Դեղագործական արտադրանքի արտադրության, պատրաստման և օգտագործման թափոններ՝ ներառյալ պիտակիության ժամկետը լրացած դեղամիջոցները (արտադրողի կողմից սահմանված ժամկետի ընթացքում չօգտագործված նյութ), այդ թվում՝ կենդանիների բուժման համար	2106 90 980 3-ից 2901-2942 00 000 0-ից 3006 92 000 0-ից 3824 99 610 0-ից	A4010	Y2 Y3

25. Կիրառական և դրա հետ կապված թափոններ (բժշկական, անասնաբուժական կամ այլ համանման գործունեության թափոններ, որոնք գոյանում են հիվանդանոցներում կամ այլ հաստատություններում պացիենտների հետազոտության, բուժման կամ գիտահետազոտական աշխատանքների ժամանակ)	3825 30 000 0-ից	A4020	Y1 Y3
24. Բիոցիդների և ֆիտոդեղագործական պատրաստուկների արտադրության և կիրառման թափոններ՝ ներառյալ ստանդարտին չհամապատասխանող պեստիցիդներ և հերբիցիդներ՝ պիտանիության ժամկետը լրացած (արտադրողի կողմից սահմանված ժամկետի ընթացքում չօգտագործված նյութ) կամ նախնական օգտագործման համար ոչ պիտանի	3808-ից 3825 61 000 0-ից	A4030	Y4
25. Բույսերի մշակման և վնասատուներից պաշտպանության միջոցների արտադրության թափոններ	3825 61 000 0-ից		Y45
26. Փայտանյութի քիմիական կոնսերվանտների արտադրության և կիրառման թափոններ (ընդգրկված չէ կոնսերվանտներով մշակված փայտանյութը) (բացառությամբ սնդիկի միացությունների)		A4040	Y5
1) կրեոզոտային յուղ	2707 91 000 0		
2) բիթումային մածուկներ	2713 20 000 0		
3) ֆտորական նատրիում	2826 19 100 0-ից		
4) սիլիկոֆտորական նատրիում	2826 90 800 0-ից		
5) պղնձարջասպ	2833 25 000 0		
6) նատրիումի դինիտրոֆենոլատ	2908 99 000 0-ից		
7) անտրացենային յուղ	2707 99		
8) փայտակոճերի տոգորման թերթաքարային յուղ	2714 90 000 0-ից		
27. Թափոններ, որոնք բաղկացած են ստանդարտին չհամապատասխանող, պիտանիության ժամկետը լրացած քիմիական նյութերից (արտադրողի կողմից սահմանված ժամկետի ընթացքում չօգտագործված նյութ) (ռեագենտներ) կամ պարունակում են այդպիսի նյութեր	28 խմբից 29 խմբից 3825-ից	A4140	
28. Քիմիական նյութերի թափոններ, որոնք հետազոտությունների կամ	28 խմբից 29 խմբից 3825-ից	A4150	Y14

ուսումնական գործունեության արդյունք են և որոնց բնույթը դեռևս պարզաբանված չէ, և (կամ) որոնք նոր են ու մարդու առողջության և (կամ) շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունը հայտնի չէ			
--	--	--	--

1. Սույն ցանկի կիրառման նպատակով անհրաժեշտ է ղեկավարվել ինչպես ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրով, այնպես էլ ապրանքի անվանումով (ֆիզիկական և քիմիական բնութագրերով):

2. Սույն ցանկն օգտագործվում է նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի մուտքի մաքսակետից մինչև ելքի մաքսակետ վտանգավոր թափոնների տարանցիկ փոխադրումների դեպքում:

3. Սույն ցանկում նշված վտանգավոր թափոնների Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանման դեպքում կիրառվում են ընթացակարգերը, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման N 6 հավելվածի ցանկում նշված վտանգավոր թափոնների արտահանման և ներմուծման համար:

(հավելվածը խմբ. 11.02.16 N 137-Ն, փոփ. 04.02.21 N 115-Ն, փոփ., լրաց. 07.04.22 N 473-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2015 թվականի
փետրվարի 5-ի N 90-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**ՋՐԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՈՐՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄՆ
ԱՐԳԵԼՎԱԾ Ե ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾԸ**

Ապրանքի անվանումը	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
Պատրաստի ձկնորսական ուռկաններ (ցանցեր), հանգուցային, արտադրված մեքենայական կամ ձեռքի միջոցով, սինթետիկ նեյլոնե կամ այլ պոլիամիդային մանրաթելերից, թելի տրամագիծը 0.5 մմ-ից պակաս և ցանցավանդակի չափը 100 մմ-ից պակաս (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 50 մմ-ից պակաս)	5608 11 800 0-ից
Պատրաստի ձկնորսական ուռկաններ (ցանցեր), հանգուցային, արտադրված մեքենայական կամ ձեռքի միջոցով, այլ սինթետիկ մանրաթելերից, թելի տրամագիծը 0.5 մմ-ից պակաս և ցանցավանդակի չափը 100 մմ-ից պակաս (ցանցավանդակի կառուցողական քայլի չափը 50 մմ-ից պակաս)	5608 11 800 0-ից
Էլեկտրատրոսիչ համակարգեր և սարքավորումներ՝ բաղկացած ազդանշանների էլեկտրական գեներատորներից՝ միակցված հաղորդիչներով և մարտկոցով, որոնք համատեղ կատարում են ջրային կենսաբանական պաշարների հայթայթման (որսի) ֆունկցիա՝ էլեկտրական հոսանքի միջոցով	8543 20 000 0

1) սույն կետի ապրանքների ցանկերից օգտվելու ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել ինչպես ապրանքի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրով, այնպես էլ ապրանքի անվանումով:

(հավելվածը փոփ. 07.04.22 N 473-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Դ. Հարությունյան

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2015 թվականի
փետրվարի 5-ի N 90-Ն որոշման

Ց Ա Ն Կ

**ԳՐԵՆԱՆՆԱԿԱՆ ՓՈԿԵՐԻՑ ԵՎ ԴՐԱՆՑ ՁԱԳԵՐԻՑ ԴԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ՈՐՈՆՑ
